

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

«Պատմա-բանասիրական հանդես»-ի 1972 թ. առաջին համարում Շ. Սմբատյանը հրապարակել է «Մի քանի ճշգրտումներ Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» բնագրի մեջ (աշխարհաբար թարգմանության կապակցությամբ)» վերնագրով մի հոդված, որտեղ առաջարկում է մի քանի սրբագրումներ Մովսես Կաղանկատվացու երկի գրաբար բնագրի և նրա աշխարհաբար թարգմանության մեջ: Դրանցից մեկը վերաբերում է Մալիսաղայի տարիքին: Կարծելով, որ Աստվածաշնչի և Մովսես Կաղանկատվացու ու Մովսես Խորենացու բնագրերում «հարիր վաթսուն և եօթն» և «հարիր ութսուն և եօթն» թվերի տարբերությունը տարրենթերցվածային է, Շ. Սմբատյանը նպատակահարմար է գտնում և՛ Մովսես Խորենացու, և՛ Մովսես Կաղանկատվացու բնագրերում «հարիր վաթսուն և եօթն»-ը սրբագրել և համապատասխանեցնել տպագիր Աստվածաշնչի «հարիր ութսուն և եօթն»-ին (էջ 175):

Թվերի այս տարբերությունը, սակայն, ոչ թե գրչական վրիպումներից ծնված տարրենթերցված է, այլ կապված է կարևոր այնպիսի մի հարցի հետ, թե հայերեն թարգմանության համար ո՞ր լեզուն (երբայեցեհն՝, թե՞ հունարեն) կամ ո՞ր ձեռագիրն է (Սինայական՝, Աղեքսանդրյան՝, Վատիկանյան՝, Եփեսոսյան՝ և այլն) բնօրինակ ծառայել: Երբայական բնագրերում և հունական Աղեքսանդրյան օրինակում Մենդոց գրքի Ե գլխի 25-րդ տան մեջ Մաթուսաղայի տարիքը նշվում է 187, իսկ հունական հնագույն մյուս օրինակներում՝ 167: Հետևաբար հայերեն տպագիր և ձեռագիր Աստվածաշնչերում թվերի այդ տարբերությունը ենթադրում է թարգմանության ժամանակ տարբեր աղբյուրների օգտագործում: Այդ նշանակում է, որ Մովսես Խորենացու և Մովսես Կաղանկատվացու բնագրերում «հարիր վաթսուն և եօթն»-ը «հարիր ութսուն և եօթն»-ով սրբագրելու առաջարկությունը տեղին չէ:

Ա. ՉԵՅԹՈՒՆՅԱՆ

* * *

Ռ. Իշխանյանը վերջերս հանդես եկավ նոր «հայտնագործությամբ»: «Գրքերի աշխարհ»-ում (1972 թ., օգոստոսի 15, № 8) նա հրապարակեց «Ինչ է պատմում ապառաժը» հաղորդումը (իսկ խմբագրությունը զարդարեց այն «Ուշադրություն, առեղծված է» հրապուրիչ պիտակով), որ ինքնագոյ՝ հաստատվում է, թե բեհիսթունյան քառալեզու արձանագրության տվյալները «Ատուլ» պատմում են», որ իբր հնում արմինի(յա), հարմինուլա(րա), ուրաշտ(աա), ուրաբտանուններով հայերն են կոչվել, իսկ Արմինիա, Արմինա, Հարմինուլա, Ուրաշտու, Ուրաբտուանուններով՝ հայերի երկիրը:

Մի՞թե զաղտնիք է, որ բեհիսթունյան արձանագրության տեքստը կազմելու ժամանակ Ուրարտուն այլևս գոյություն չունեի: Ուստի պարզ չէ՞, որ բեհիսթունյան արձանագրության արամեացի և բարելացի թարգմանիչները վերոհիշյալ տեքստները հարմարեցրել են իրենց աշխարհագրական պատկերացումներին (այսինքն՝ այդ ժամանակվա Արմինան համապատասխանում էր նախկին Ուրարտու—Ուրաշտուին): Այստեղից էլ, ականեւաբար, սերում է թարգմանիչների մյուս մոտեցումը՝ արմինացի կամ հայ Արախան ոչ այլ ոք է, քան ուրարտացի կամ ուրարտ:

Ի՞նչ ուրարտացի (կամ ուրարտը) և հայը իսկապես ըստ ամենայնի համազոր են, ապա ինչո՞ւ Ռ. Իշխանյանը ականակ անգամ չի անում նաև նրանց լեզվի նույնության մասին: Արդյո՞ք այդ «մոռացության» զաղտնիքն այն չէ, որ այլապես տեղն ու տեղը հօգս կցնդեր առաջարկված սկզբից մինչև վերջ խախուտ տեսությունը:

Այս հարցերի կապակցությամբ հետաքրքիր էր իմանալ խմբագրությանդ կարծիքը:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ.— Նամակում արժանիքով հարցերին «Պատմա-բանասիրական հանդես» անցյալ տարիների ընթացքում հանգամանորեն անդրադարձել է մի քանի անգամ: Մասնավորապես դրանք շոշափված են ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի («Հայկական առաջին պետական կազմավորումներ», 1968 թ. № 3, և «Հայ ժողովրդի կազմավորման ընթացք», 1970 թ. № 2), պատմական գիտությունների ղեկավարներ Ն. Վ. Հաբուրյունյանի («Ուրարտուի պատմության ճանաչման համալսարանական դասընթաց», 1969 թ. № 3) և Գ. Խ. Սարգսյանի («Հիմնագուրկ տեսություններ Ուրարտուի մասին», 1970 թ. № 3) հոդվածներում:

Այդ հարցերին էլ եմք վաճառում նաև մի խումբ ակադեմիկոս հայագետների նամակը՝ տպագրված «Սովետական Հայաստան» օրաթերքում (23 օգոստոսի 1971 թ.):

Ինչ վերաբերում է «Գրքերի աշխարհ» ամսաթերքում Ռ. Իշխանյանի ստորագրությունը կրող հրվածքին, խմբագրության կազմիսով դա ոչ մի կապ չունի գիտության հետ: